Տասներկուերորդ հաղորդում

Աստված, ով թաքցնում է Իրեն՝ թաքցված Աստված

Գրվածքների ընթերցում. Եսյ 45:15, Եփս 3:16-17,
Փլպ 2:13, Ղկս 18:1-8

I. «Հիրավի Դու Քեզ թաքցնող Աստված ես, օ՜, Իսրայելի Աստվա՛ծ, Փրկի՛չ» Եսյ 45:15.

Ա. Հազիվ թե Աստծու զավակներից որևէ մեկը գիտե, որ Աստվածաշունչը խոսում է Աստծու՝ որպես Իրեն թաքցնող Աստծու մասին՝ խ. 15.

1. Դա ապացուցում է, որ Աստծու զավակները բավարար գիտություն չունեն Աստծու՝ որպես Իրեն Թաքցնողի մասին:
2. Մենք, հնարավոր է, ճանաչում ենք Աստծուն որպես ամենակարող Աստծու, արդար Աստծու և որպես Աստծու, ով լի է շնորհքով և սիրո հոգածությամբ, բայց չենք ճանաչում Աստծուն՝ որպես Իրեն թաքցնող Աստծու՝ Ղկս 1:49, Ա Պտ 5:6, Հյտ 15:3, Եփս 2:7, Սղմ 17:7.

Բ. Թեև մեր Աստված ամենագո, ամենակարող ու ներմամբ լի է, Նա նաև թաքնվող Աստված է, ինչպես ցույց է տալիս Եսթերի գիրքը՝ 4:14:

Գ. Աստված ստեղծեց տիեզերքը և հետո Իրեն դրա մեջ թաքցրեց այնպես, որ մենք չգիտենք՝ թե որտեղ գտնել Նրան՝ Հոբ 23:3:

Դ. Աստված անթիվ բաներ էր կատարում Իսրայելի զավակների միջավայրում ու անթիվ բաներ՝ նրանց անձնական կյանքում, այդուհանդերձ, Նա ծածկում էր Իրեն. Նա անդադար աշխատում էր, բայց միշտ թաքցված էր մնում՝ Եսյ 45:15:

Ե. Մենք պետք է գիտակցենք, որ ամենակարող Աստված, ում մենք ծառայում ենք, նախկինի պես թաքցնում է Իրեն, հատկապես, երբ օգնում է մեզ՝ Հվի 14:26, Հռմ 8:28.

1. Մենք չենք տեսնում Նրան, և առաջին հայացքից Նա ոչինչ չի անում:
2. Իրականում Նա թաքցված կերպով մեզ համար շատ բաներ է անում, երբ Իր Հոգու միջոցով մեզ զորությամբ ներամրապնդվել է տալիս ներքին մարդու մեջ, որպեսզի Քրիստոսն Իր տունը հաստատի մեր սրտերում՝ խխ. 28, 34, Եսթ 4:14, Փլպ 2:13, Եփս 3:16-17ա:

Զ. Իրեն թաքցնող Աստված լուռ, այդուհանդերձ զորավոր կերպով գործում է մեր ներսում՝ Փլպ 2:13.

1. Մեր պարտականությունը մեր ներսում եղող ներքին զգացողությանը արձագանքելով Նրա հետ համագործակցելն է՝ Հռմ 8:6:
2. Ամեն անգամ, երբ մենք զգում ենք, որ Աստված ապրում ու գործում է մեր ներսում, պետք է «ամեն» ասենք, որովհետև այնտեղ՝ մեր էության խորքում, գաղտնի ու անդադար աշխատում է Իրեն թաքցնող Աստված:

Է. Եթե ուշադիր կերպով ուսումնասիրենք Գրվածքները, կտեսնենք, որ Աստված այնպիսի խառնվածք ունի, որը ցուցամոլություն չի սիրում.

Նրան դուր է գալիս աշխատել ծածուկ, և ոչ թե բացահայտ կերպով՝ Մտթ 6:1-8:

Ը. Մեր նախահակումը տրամագծորեն հակադիր է Աստծու նախահակմանը՝ իրեն թաքցնող նախահակմանը՝ Եսյ 45:15.

1. Աստված սիրում է ծածկվել, մենք սիրում ենք մեզ ցուցադրել՝ Մտթ 6:1:
2. Աստված չի տենչում արտաքին դրսևորումների, իսկ մենք չենք կարող բավարարված լինել առանց դրանց՝ խ. 2:
3. Այս աստվածային նախահակումը մեծ փորձություն և ստուգում է մեզ համար:

II. Եսթերի գրքում վառ կերպով նկարագրվում է, թե ինչպես էր Իսրայելի՝ Իրեն թաքցնող Աստված հոգում իր կեղեքվող ընտրյալների համար նրանց սփյուռքում և բացահայտորեն փրկեց Իր հալածվող ընտրյալներին նրանց գերության մեջ՝ 1:1-22, 2:1-23.

Ա. Այս գրքի հանգուցային դրույթն այն է, որ հենց այն Աստված, ով ընտրեց Իսրայելին՝ Աբրահամի հետնորդներին՝ որպես Իր ընտրյալների, այն բանից հետո, երբ նրանց գերության հանձնեց հեթանոս ազգերին, նրանց համար թաքցված Աստված դարձավ, ով ծածուկ կերպով հոգում էր նրանց համար և բացահայտորեն փրկեց նրանց՝ ծածուկում գործելով՝ Եսյ 45:15.

1. Սա է պատճառը, որ Եսթերի գիրքն Աստծու անունը չի հիշատակում նույնիսկ այն տեղերում, որտեղ Աստծու անունը պետք է հիշատակվի՝ 4:3, 16:
2. Մի կողմից՝ Աստված օգտագործեց հեթանոս ազգերին՝ որպես գործիքի, որպեսզի կարգավարժի Իր ժողովրդին. մյուս կողմից՝ թաքնվող Աստված Իսրայելի ժողովրդի հետ էր և հոգում էր նրանց համար:

Բ. Թաքնվող Աստված բազում բաներ արեց Իսրայելի համար ծածուկ կերպով.

1. Թաքնվող Աստված հեթանոս աշխարհում մի մեծ թագավոր հաստատեց՝ նրան իշխանություն տալով Հնդկաստանից մինչև Եթովպիա ձգվող մի մեծ կայսրության վրա՝ 1:1-2:
2. Թաքնվող Աստված մեծ թագավորին մղեց գահընկեց անելու իր թագուհուն՝ իր խոսքին նրա անհնազանդության պատճառով՝ խխ. 3-22:
3. Իր ծածուկ հոգատարության մեջ թաքնվող Աստված բարձրացրեց Եսթերին՝ հրեա մի որբ կույսի, ով գերազանց թագավորի կողմից թագադրվեց որպես նրա թագուհին՝ 2:1-18:

Գ. Գերության տարիներին Աստված թաքնվում էր, և Նա շարունակում է թաքնվել նույնիսկ այսօր՝ եկեղեցու դարաշրջանում. Աստված թաքցնում է Իրեն՝ Եսյ 45:15:

III. Ղկս 18:1-8-ում գրառված առակի իմաստը շատ խոր է, և մենք պետք է ճանաչենք Աստծուն, ինչպես որ Նա բացահայտված է, որպես թաքցված Աստծու.

ԱՍՏՎԱԾ, ՈՎ ԹԱՔՑՆՈՒՄ Է ԻՐԵՆ՝ ԹԱՔՑՎԱԾ ԱՍՏՎԱԾ

Ա. 3-րդ խոսքի որբևայրին խորհրդապատկերում է հավատացյալներին. ինչ-որ առումով Քրիստոսին հավատացողները ներկա դարաշրջանում որբևայրի են, որովհետև նրանց Ամուսինը՝ Քրիստոսը, նրանց հետ չէ՝ Բ Կրթ 11:2.

Բ. Ինչպես և առակի որբևայրին (Ղկս 18:3), մենք՝ Քրիստոսին հավատացողներս, ունենք հակառակորդ, որը Սատանան է՝ բանսարկուն, ում առնչությամբ մեզ Աստծու վրեժխնդրությունն է անհրաժեշտ.

1. Այս առակը ցույց է տալիս այն չարչարանքը, որին ենթարկվում ենք մեր հակառակորդի պատճառով Տիրոջ ակնհայտ բացակայության ժամանակ:
2. Նրա ակնհայտ բացակայության ժամանակ մենք որբևայրի ենք, որի հակառակորդը մշտապես անհանգստացնում է նրան:

Գ. Երբ մեր հակառակորդը հալածում է մեզ, թվում է, թե մեր Աստված անարդար է, որովհետև Նա թույլ է տալիս, որ Իր զավակներն անարդարաբար հալածվեն՝ Ա Պտ 2:20, 3:14, 17, 4:13-16, 19.

1. Դարեր շարունակ Տեր Հիսուսի բյուր-բյուրավոր ազնիվ ու հավատարիմ հետևորդներ տառապել են անարդարացի հալածանքից. անգամ այսօր շատերը դեռ ենթարկվում ենք անարդարացի վերաբերմունքի՝ Հյտ 2:8-10:
2. Թվում է, թե մեր Աստված անարդարացի է, քանի որ չի միջամտում, որպեսզի դատի ու արդարացնի. այս իրավիճակի պատճառով Տեր Հիսուսն օգտագործում է անարդար դատավորին, որպեսզի խորհրդապատկերի Աստծուն, ով կարծես ոչինչ չի անում հանուն Իր հալածյալ ժողովրդի՝ Ղկս 18:2-6:

Դ. Առակի որբևայրին շարունակ գալիս էր անարդար դատավորի մոտ ու նրան խնդրում, որ իր հակառակորդից վրեժ առնի. մենք պարտավոր ենք այս վրեժխնդրության համար հաստատակամորեն աղոթել և չվհատվել՝ խխ. 1, 3.

1. Երբ մեր Ամուսինն առաջին հայացքից բացակայում է, և մենք որբևայրու պես թողնված ենք երկրի վրա, ժամանակավորապես թվում է, թե մեր Աստված անարդար դատավոր է՝ խ. 6:
2. Թեև Նա անարդար է թվում, մենք, միևնույն է, պետք է դիմենք Նրան, հաստատակամորեն աղոթենք և նորից ու նորից անհանգստացնենք Նրան, քանի որ Նա իր ընտրյալների համար արագորեն վրեժխնդրություն կանի, «ովքեր օր ու գիշեր Իրեն են աղաղակում»՝ խխ. 7-8ա:

Ե. Հյտ 8:5-ը ենթադրում է պատասխանը 6:9-11-ի և Ղկս 18:7-8-ի աղոթքներին.

1. Սրբերի աղոթքը Հյտ 8:3-4-ում, ըստ երևույթին, Աստծու տնտեսությանն ընդդիմացող երկրին հասնող դատաստանի համար է:
2. Երկրի հանդեպ Աստծու դատաստանը՝ երկրի վրա կրակ գցելը, սրբերի՝ Քրիստոսով՝ որպես խնկարկությամբ հանդերձ աղոթքներին տրված պատասխանն է՝ խխ. 3-5:

Զ. «Երբ Մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատք կգտնի՞»՝ Ղկս 18:8բ.

1. Հունարեն տեքստում որպեսզ «հավատք» թարգմանված բառից առաջ հոդ է օգտագործված, որը ցույց է տալիս, որ սա որոշակի հավատք է՝ հաստատակամ հավատք մեր հաստատակամ աղոթքի համար, ինչպես այրու հավատքը:
2. Հավատքը, որի միջոցով մենք փրկվել ենք, հավատքի նախնական փուլն է. այն հավատքը, որը մեզ կյանքի միության մեջ բերեց Քրիստոսի հետ, կապող հավատքն է, հավատք, որը մեր մեջ է մտնում Եռամեկ Աստծու հետ մեր մշտական շփման միջոցով, որպեսզի ապրենք Աստծու Որդու շնորհիվ՝ Հռմ 1:17, Գղտ 2:20, Հվի 14:19:
3. Կապող հավատքը հաղթողներին ներկայացվող աստվածային պահանջն է, որպեսզի նրանք դիմավորեն Քրիստոսին Նրա հաղթական վերադարձի ժամանակ՝ Ղկս 18:8բ.
   ա. Կապող հավատքը Եռամեկ Աստված է, ով շարժվում է մեր մեջ, որպեսզի մեզ կապի Իր անքննելի հարստության հետ՝ Եփս 3:8:
   բ. Կապող հավատքը հավատացյալների հավատքն է, որոնք չեն ապավինում իրենց, այլ ապավինում են Աստծուն՝ Բ Կրթ 1:9:
   գ. Երբ Տեր Հիսուսը վերադառնա, նա մի շարք հաղթողների կգտնի, որոնք ապրում են կապող հավատքով, և նրանց գանձ կհամարի Իր թագավորության համար Իր թագավորման հազար տարիներին՝ Ղկս 18:8բ, Հյտ 20:4, 6:

© 2022 Living Stream Ministry